ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դարբնիկ, 0236-6-42-62, darbnik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014 թվականի N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ գյուղական համայնքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ;

2/ սույն կետի <<1>>-ին ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ;

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ;

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ;

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ;

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ

կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ;

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով;

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության ,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ;

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար;

2/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000 դրամ;

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ;

2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ;

3/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ;

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարությանփաստագրելու համար,մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 10000 դրամ:

2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է 5000 դրամ:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 3000 դրամ:
4. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար
1/ յուրաքանչյուր բնակչի համար 25 դրամ;
2/ սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար 250 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՎԱՀԱԳ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԴ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
4. ՏՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՔԱՄԱԼՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԳԶԻՐՅԱՆ